ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՈՒ-106/26

ք.Երևան

« 09 » մարտի 2026թ.

Ներքին Գործերի նախարարությունը , ի դեմս գլխ. քարտուղար Ա. Ֆիդանյանի, այսուհետ՝ «Պատվիրատու» մի կողմից, «Տեխնիկական անվտանգության փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ-ն, ի դեմս՝ տնօրեն Հ.Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ՝ «Կատարող», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.1.Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները ,իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա դիմաց:

1.2.Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝ վերապատրաստում և գիտելիքների ստուգում

Հ/Հ	Աշխատակցի անուն, ազգանուն	Վերապատրաստում,գիտելիքների ստուգում	Ծառայության արժեք/դրամ
1	Կարեն Մխիթարյան	Ավելցուկային ճնշման տակ աշխատող արքավորումների՝ ամոնիակային սառնարանային կայանքների շահագործող սպասարկող մեքենավար	11000
2	Արկադի Խաչատուրյան	Ավելցուկային ճնշման տակ աշխատող արքավորումների՝ ամոնիակային սառնարանային կայանքների շահագործող սպասարկող մեքենավար	11000
3	Սիրեկան Հակոբյան	Ավելցուկային ճնշման տակ աշխատող արքավորումների՝ ամոնիակային սառնարանային կայանքների շահագործող սպասարկող մեքենավար	11000
4	Գնել Խաչատրյան	Ավելցուկային ճնշման տակ աշխատող արքավորումների՝ ամոնիակային սառնարանային կայանքների շահագործող սպասարկող մեքենավար	11000
5	Արմեն Հովհաննիսյան	Ավելցուկային ճնշման տակ աշխատող արքավորումների՝ ամոնիակային սառնարանային կայանքների շահագործող սպասարկող մեքենավար	11000
6	Գարիկ Գալստյան	Ավելցուկային ճնշման տակ աշխատող արքավորումների՝ ամոնիակային սառնարանային կայանքների շահագործող սպասարկող մեքենավար	11000
7	Բենիկ Գրիգորյան	Ավելցուկային ճնշման տակ աշխատող արքավորումների՝ ամոնիակային սառնարանային կայանքների շահագործող սպասարկող մեքենավար	11000
8	Արայիկ Առաքելյան	Ավելցուկային ճնշման տակ աշխատող արքավորումների՝ ամոնիակային սառնարանային կայանքների շահագործող սպասարկող մեքենավար	11000
9	Վաչագան Մարգսյան	Ավելցուկային ճնշման տակ աշխատող արքավորումների՝ ամոնիակային սառնարանային կայանքների շահագործող սպասարկող մեքենավար	11000
	Ընդամենը՝ ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ	Իննսունինը հազար դրամ	99000

1.3.Ծառայությունները մատուցվում են Պայմանագրի 4.1. կետով հաստատված գումարը փոխանցելուց հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում: Դասընթացների ընդհանուր տևողությունը 12 ժամ է, դասաժամերի օրերը, ժամերը և վայրը փոխադարձ համաձայնեցվում են Պատվիրատուի հետ:

1.3.1.Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձման-ընդունման արձանագրության ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում կամ այլ ժամկետներում՝ Պատվիրատուի համաձայնությամբ.

2.2. Պատվիրատուն պարտավոր է վճարել սույն պայմանագրի 4.1. կետում նշված գնին համապատասխան գումարը, պայմանագիրը հաստատելուց հաջորդող 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում.

2.3. Պատվիատուն իրավունք ունի՝

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. Մինչև արձանագրության ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

3. Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ :

3.2.Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.
բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
3.3.Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. Պայմանագրի գինը

4.1.Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր արժեքը կազմում է 99 .000 (իննսունինը հազար)ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:
4.2.Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագիր ներկայացնելու հիման վրա, սույն պայմանագրի 2.2 կետում նշված ժամկետում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:
5.2. Սույն պայմանագրի 2.2 կետում նշված վճարման ժամկետների խախտման դեպքում պատվիրատուն պարտավոր է յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար վճարել պայմանագրով ծառայությունների մատուցման դիմաց վճարվելիք գումարի 0.1 տոկոսի չափով տույժ :
5.3.Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.4. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:
5.5. Կողմերը պարտավորվում են սույն Պայմանագրի գործողության ընթացքում և ավարտից հետո պահպանել, չհրապարակել, երրորդ անձանց չհայտնել Պայմանագրի կատարման ընթացքում իրենց հայտնի դարձած բանկային և/կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունները: ՀՀ օրենսդրությամբ, գործարար շրջանառության սովորույթներին համաձայն կամ Կողմերի համար գաղտնիք համարվող տեղեկությունները երրորդ անձանց կարող են տրամադրվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
5.5.1.Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կողմ Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելուց հրաժարվելու դեպքում,պարտավոր է սույն Պայմանագրի 4.1.կետով սահմանված գնի 20%(քսան)վճարել մյուս կողմին Պայմանագրով սահմանված իր պարտավորությունները կատարելուց հրաժարվելուն հաջորդող 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում,բացառությամբ,
եթե հրաժարումը կապված է մյուս կողմի՝ սույն Պայմանագրով ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ:
Պատվիրատուի 4.1.կետը չպահպանվելու դեպքում «Կատարող»-ը կարող է համարել պայմանագիրը լուծված և պահանջել պատվիրատուից 4.1.կետով սահմանված գումարի 20%(քսան)-ը վճարել «Կատարող»-ին:

6. Վեճերի լուծման կարգը

6.1.Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:
6.2.Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
6.3. Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

7.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1.Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից , եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորություններ իկատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1.Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

8.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ներքին Գործերի նախարարություն	«Տեխնիկական անվտանգության
Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 130	փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ
Հվհհ՝ 02882913	Հասցե՝ ք.Երևան, Ազատության պող. 24, 400
h/h 900011046373	ՀՎՀՀ 00174288
	բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Գլխ. քարտուղար _____Ա. Ֆիրսանյան	h/h 1570064139081300
ստորագրություն	Հեռ.՝ +37493440402
Կ.Տ.	Էլ փոստ: tapkllc@gmail.com
	Տնօրեն՝_____Հ.Գրիգորյան
	ստորագրություն
	Կ.Տ.